ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-22/31ծածկագրով էլեկտրոնային աճուրդով միջոցառումների հետ կապված ծառայությունների

/համահայկական հայագիտական օլիմպիադա/ գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.02.2022թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

ք. Երևան

22.02.2022թ ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մնացականյան

Հանձնաժողովի անդամ՝ Ամալյա Քոչարյան

Ալվինա Էլոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Հոթել Աղվերան» ՓԲԸ
2	ԱՁ «Խաչատուր Իսահակյան»
3	ԱՁ «Լուսինե Ղազարյան»
4	«ԱՌԹԱ» ՍՊԸ
5	«Մոնթե կորպորեյշն» ՍՊԸ
6	«ՖԻՉԸՐ » ՍՊԸ
7	«ՏԷՏԷ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ
8	«ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ
9	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները																	
		«Հոթել Աղվերան» ՓԲԸ		ԱՁ «Խաչատուր Իսահակյան»		ԱՁ «Լուսինե Ղազարյան»		«ԱՌԹԱ» ՍՊԸ		«Մոնթե կորպորեյշն» ՍՊԸ		«ՖԻՋԸՐ » ՍՊԸ		«ՏԷՏԷ ՀԱՇՎԱՊԱՀՈ ԻԹՅՈՒՆ» ՍՊԸ		«ՍՊԱՅԴԵՐ » ՍՊԸ		«Մաստեր Սթայլ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ																	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	17500000	9000000	10800000	9790000	9790000	12127000	12127000	12301500	12301500	15252000	15252000	15601000	15601000	17500000	17500000	23000000	23000000	29985000	29985000

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.2 «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտով ներկայացված փաստաթղթերը ստորագրված չեն տնօրենի կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից, Հավելված 1-ում պատվիրատուի անվանումը սխալ է նշված:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ փետրվարի 24-ին, ժամը 14:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 24.02.2022թ. ժամը 14:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մնացականյան

Հանձնաժողովի անդամ՝ Ամալյա Քոչարյան

Ալվինա Էլոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել է 4.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Տվյալներ մերժված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին:

7.2 Հակադարձ աճուրդի արդյունքում «ՍՊԱՅԴԵՐ» ՍՊԸ-ի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հայտերը համակարգի կողմից մերժվել են նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

7.3 «Խաչատուր Իսահակյան» ԱՁ-ի, «Լուսինե Ղազարյան» ԱՁ-ի, «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի, «Մոնթե կորպորեյշն» ՍՊԸ-ի, «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ի և «ՏԷՏԷ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի հայտերը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կարեն Մնացականյան /նախագահ/

---------- Ամալյա Քոչարյան

---------- Ալվինա Էլոյան

---------- Աննա Սիմոնյան /քարտուղար/